



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՐԻՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԳԵՏԷ Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, 19 Օգոստոսը Սուրբ Աստուածածնայ վերափոխման տոսի ութերորդ օրն է:

Այս առիթով Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ պիտի հանդիսապետէ Ս. Պատարագին եւ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ հաւատացեալ ժողովուրդին եւ ապա, պիտի նախահագէ հոգեհանգստեան արարողութեան:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT HOLY MARTYRS CHURCH

Sunday, August 19th, is the eighth day of the Feast of the Assumption of the Holy Mother of God. On this occasion H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino and deliver the sermon. The Prelate will also preside over requiem services.

Ս. ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

ԱՍՏՈՒԾԱՄՕՐ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆԸ ԲԱՐԻ ՕՐԻՆԱԿ՝ ԲՈԼՈՐ ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ ԵՒ ՔՈՅՐԵՐՈՒՆ

ՊԱՏԳԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ

Հայաստանայց Առաքելական եկեղեցին Կիրակի, 12 Օգոստոսին նշեց Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը: Այս առիթով, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ եւ խաղողօրհնէքի աւանդական արարողութիւն:

Այս տօնը է՛ նաեւ, Կլենտէյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը: Համաձայն մեր Թեմի աւանդութեանց: Նոյն առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուցանեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ

մէջ, հաւատացեալներուն ուղղեց օրուան խորհուրդէն մեկնող պատգամ մը եւ ապա, կատարեց խաղողօրհնէք ու մատաղօրհնէք:



Առաջնորդ Սրբազանը իր քարոզին մէջ վեր առաւ Ս. Աստուածածնի արժանիքները, ընդգծելով անոր բարութիւնը, ազնուութիւնը, խոնարհութիւնն ու համեստութիւնը: Ան շեշտեց, որ Սուրբ Կոյս Մարիամ իր առաքինի կենցաղով՝ արժանացաւ երկնային շնորհի, դարձաւ Աստուածամայր, ու

տիպար օրինակ մը բոլոր մայրերուն ու կիներուն համար:

Ս. Պատարագի աւարտին, տեղի ունեցաւ մատաղօրհնէք ու խաղողի օրհնութեան արարողութիւնը:

ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ

Յայտնենք նաեւ, որ Շաբաթ, 11 Օգոստոսի երեկոյեան, Առաջնորդ Սրբազանին նախագահութեամբ Ս. Պատարագ եւ խաղողօրհնէքի արարողութիւն տեղի ունեցաւ նաեւ Ազգ. Առաջնորդարանի Ս. Տրդատ եւ Ս. Աշիսէն մատրան մէջ:

Ս. Պատարագը մատուցանեց Գերայ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան: Ներկայ հաւատացեալներուն շարքին էր երիտասարդներու նկատառելի թիւ մը: Կ'արժէ յիշատակել, որ Առաջնորդ Սրբազանին տնօրինումով, Ազգ. Առաջնորդարանի Մատրան մէջ ամսական հերթականութեամբ Ս. Պատարագի արարողութիւնները կը կազմակերպուին յատկապէս երիտասարդութեան համար:



CELEBRATION OF THE FEAST OF THE ASSUMPTION OF THE HOLY MOTHER OF GOD

On Sunday, August 12th, the Armenian Church celebrated the Feast of the Assumption of the Holy Mother of God with Divine Liturgy and the blessing of grapes. It was also a celebration of St. Mary's Church in Glendale. On this occasion H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine

Liturgy at St. Mary's Church and officiated over the blessing of grapes and *madagh* ceremonies.



In his sermon the Prelate extolled the virtues of St. Mary such as her righteousness, humility, and modesty, stressing that it was due to her virtuous nature that she was found worthy of becoming the Mother of God. She was found worthy of God's graces for she loved God and placed her trust in His Word and Holy Will. The Prelate also

emphasized the love and respect of the Armenian people, and especially Armenian woman, demonstrate towards St. Mary pointing out that our faithful continue to turn to her as their role model and intercessor just as they did centuries ago. The blessing of grapes and *madagh* took place following Divine Liturgy.

Divine Liturgy was also celebrated at the Prelacy St. Dertad and St. Ashkhen Chapel on the evening of Saturday, August 11th, as well as the blessing of grapes. The Prelate presided over the service which was conducted by Very Rev. Fr. Muron Aznikian.

ՍՊԱՅԱՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ԲԱԲԳԷՆ ԵՊՍ. ՉԱՐԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Հինգշաբթի, 16 Օգոստոսի կեսօրին, Ազգային Առաջնորդարան այցելեցին Սպահանի Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Բաբգեն Եպս. Չարեան եւ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ հոգաբարձութեան Ատենապետ՝ Տիար Ներսէս Դշոյեան, որոնք ընդունուեցան Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ:

Նկատի ունենալով, որ հիւր Սրբազան Հայրը իր առաջին այցելութիւնը կուտար Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց շէնքը, Առաջնորդ Սրբազանը ծանօթացուց տարբեր բաժանմունքները եւ խօսեցաւ յառաջիկայ ծրագիրներուն մասին:

Բաբգեն Սրբազան խոր գոհունակութիւն յայտնեց տարուող աշխատանքներուն համար, յիշեց այս Թեմէն ներս իր



տարած աշխատանքները, եւ ապա, իր կարգին, ծանօթութիւններ տուաւ Նոր Զուղայի հայկական գաղութին ու անմիջական ծրագիրներուն մասին:

PRELATE OF ISFAHAN H.G. BISHOP PAPKEN TCHARIAN VISITS THE PRELACY

On the afternoon of Thursday, August 16, the Prelate welcomed H.G. Bishop Papken Tcharian, Prelate of the Diocese of Isfahan, Iran to the Prelacy. He was accompanied by Mr. Nerses Teshoian, Chair of the Board of Trustees of St. Gregory Church in San Francisco.

Given that it was Bishop Tcharian's first visit to the new Prelacy, the Prelate detailed the activities and future projects of the various departments. In turn, Bishop Papken conveyed to the Prelate information about the state of the Armenian community of New Julfa and their current activities.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԱԽԱԳԱՅԵՑ Ս. ՆԱՅԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՅՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ բարգաւաճման ու պայծառացման նպատակով, հոգաբարձութիւնը Ուրբաթ, Օգոստոս 10ի երեկոյեան կազմակերպեց հանգանակային երեկոյ մը, որ տեղի ունեցաւ հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան Հօր, եւ հիւրընկալութեամբ Տեր եւ Տիկին Ճան եւ Մարիսէ Մարթայեաններու:

Ներկայ էին Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան, ծխական Ազգային Երեսփոխաններ, Ազգային Վարչութեան եւ միութենական ներկայացուցիչներ եւ խումբ մը ազգայիններ, որոնք եկած էին զօրավիզ հանդիսանալու եկեղեցւոյ բարեգարդման համար կազմակերպուած այս երեկոյին:

Խօսք առին հանդիսավարը՝ Պրն. Նիկոլ Մանուկեան, շրջանի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Քհնյ. Խաչատուրեան, հոգաբարձութեան ատենապետը՝ Պրն. Լեւոն Արապեան, հիւրընկալ ամուլին զաւակը՝ Պրն. Կրէկ:

Երեկոյի պաշտօնական բաժնի ավարտին խօսք առաւ Առաջնորդ Սրբազան Հայրը, որ շնորհաւորեց եւ գնահատեց Հոգեւոր Հովին ու հոգաբարձութիւնը, վեր առնելով եկեղեցւոյ դերակատարութիւնը մեր ժողովուրդին ծառայութեան կեանքին մէջ:

PRELATE PRESIDED OVER FUNDRAISING FOR HOLY MARTYRS CHURCH

On the evening of Friday, August 10, a fundraising reception for Holy Martyrs Church took place under the auspices of the Prelate. The event was organized by the Board of Trustees and hosted by Mr. and Mrs. John and Marine Martayan at their residence.

Among the attendees was Very Rev. Fr. Muron Aznikian, delegates, representatives of the Prelacy Executive Council and community organizations, and supporters of the church. Throughout the evening remarks were made by various individuals including Master of Ceremonies Mr. Nigol Manoukian, Rev. Razmig Khatchadourian, Board of Trustees Chair Mr. Levon Arabian, and Mr. Greg Martayan.

The official program concluded with the Prelate's remarks in which he congratulated and commended the dedicated service of the Pastor and Board of Trustees to the community.

ՏՈՔԹ. ՉԱԷՆ ՄԱՆՐԼԵԱՆԻ Ի ՊԱՏԻ ԶԵՆԱՐԿԻՆ

Ուրբաթ, 17 Օգոստոսի երեկոյեան, Զ.Բ.Ը.Մ.ի Ալեք Մանուկեան Կեդրոնին մէջ տեղի պիտի ունենայ բազմավաստակ դաստիարակ եւ պատմաբան Դոկտ. Չաւեն Մաքրլեանի մեծարանքի հանդիսութիւն մը:

Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Զոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, իբրեւ ներկայացուցիչը Առաջնորդ Սրբազան Զօր, ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

TRIBUTE TO DR. ZAVEN MESSERLIAN

The AGBU Southern California District Committee has organized a tribute to principal of the Armenian Evangelical College in Beirut Dr. Zaven Messerlian to take place on the evening of Friday, August 17th. The event is being held at the AGBU Alex Manoogian Center in Pasadena.

Very Rev. Fr. Barthev Gulumian will attend on behalf of the Prelate

ԱՍՈՐԻ ՕՐԹՈՏՈՔՍ ԶԱՄԱՅՆՔԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ 25ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Այս շաբաթավերջին, Ասորի Օրթոտոքս եկեղեցին պիտի նշէ Ուիթիըր շրջանի համայնքին Ս. Աստուածածին եկեղեցւոյ 25-ամեակը:

Այս առիթով, տեղի պիտի ունենան յատուկ արարողութիւններ եւ հանդիսութիւններ, որոնք պիտի երկարին երկու օրերու վրայ, Շաբաթ, 18 եւ Կիրակի 19 Օգոստոսին:

Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Զոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, ինչպէս նաեւ

Արժ. Տ. Արտակ Քհնյ. Տեմիրճեան եւ Արժ. Տ. Աշոտ Քհնյ. Գամպուրեան Առաջնորդ Սրբազանը պիտի ներկայացնեն տարբեր հանդիսութիւններու եւ արարողութիւններու:

PRELATE REPRESENTED AT SILVER JUBILEE OF ST. MARY'S SYRIAN ORTHODOX CHURCH

During this weekend St. Mary's Syrian Orthodox Church in Whittier will celebrate its 25th anniversary with Divine Liturgy and special prayers. The celebration will begin on Saturday, August 18th, and continue on Sunday, August 19th.

Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian, Rev. Ardag Demirjian, and Rev. Ashod Kambourian will represent the Prelate during the various functions.